# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 21-Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով,

*Թալին համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հաստատել Թալին համայնքի ավագանու 2024 թվականի առաջին նստաշրջանի հերթական նիստի օրակարգը.

1)Թալին համայնքի ավագանու 27.12.2023թ-ի <<Թալինի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 164-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

2) Թալին համայնքի ավագանու 27.12.2023թ-ի <<ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ՀՈԱԿ-ների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 158-Ա որոշման 1-ին և 10-րդ հավելվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

3) Թալին համայնքի Արագածավան բնակավայրում արևային ֆոտովոլտային կայաններ տեղադրելու մասին:

4) Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:

5) Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:

6) Թալին համայնքի, Արագածավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 02-016-0489-0005, 02-016-0489-0008, 02-016-0489-0017, 02-016-0489-0012, 02-016-0489-0003, 02-016-0489-0058, 02-016-0489-0016 և 02-016-0489-0061 ծածկագրերով հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

7) Թալին համայնքի Լուսակն բնակավայրում գտնվող փողոցն անվանակոչելու մասին:

8) Թալին համայնքի, Ն.Բազմաբերդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 02-073-0242-0013 ծածկագրով հողամասից առանձնացված 3,8367 հա հողամասը ժամանակավոր օգտագործման տրամադրելու մասին:

9) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

10) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինների և Համայնքապետարանի աշխատակազմի հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին:

11) Թալին համայնքի, Ն.Բազմաբերդ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 02-073-0219-0022, 02-073-0216-0010 և 02-073-0216-0018 ծածկագրերով հողամասերում հողազրունտի հանույթի աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

12)Պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:

13)ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ավագանու 2024 թվականի առաջին նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-17 | Դեմ-0 | Ձեռնպահ-1 |
|---|---|---|
| 1.Տ. Սափեյան | | 1.Վ. Եղիազարյան |
| 2.Բ. Պողոսյան | | |
| 3.Ա. Կարապետյան | | |
| 4.Մ. Գրիգորյան | | |
| 5.Գ. Ղազարյան | | |
| 6.Մ. Մկրտչյան | | |
| 7.Ա. Մինասյան | | |
| 8.Հ.Կարապետյան | | |
| 9.Ա. Ծառուկյան | | |
| 10.Ն. Մարգարյան | | |
| 11.Գ. Սարգսյան | | |
| 12.Ա. Վարդանյան | | |
| 13.Ն. Գրիգորյան | | |
| 14.Մ. Մուրադյան | | |
| 15. Գ. Ավետիսյան | | |
| 16.Դ. Մանուկյան | | |
| 17.Կ. Գրիգորյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 22-Ա

### ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2023Թ-Ի N 164-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

*Թալին համայնքի ավագանին որոշում է՝*

1.Թալին համայնքի ավագանու 27.12.2023թ-ի՝ <<Թալինի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 164-Ա որոշման հավելվածի համայնքային վարչական պաշտոններ բաժնի 8-17-րդ տողերում կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն կից հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024թ-ի ապրիլի 1-ից:

| Կողմ-14 | Դեմ-3 | Ձեռնպահ-2 |
|---|---|---|
| 1.Տ. Սափեյան | 1. Ղ. Հակոբյան | 1.Ս. Մուրադյան |
| 2.Բ. Պողոսյան | 2.Դ. Մանուկյան | 2.Կ. Գրիգորյան |
| 3.Ա. Կարապետյան | 3.Գ. Ավետիսյան | |
| 4.Ս. Գրիգորյան | | |
| 5.Գ. Ղազարյան | | |
| 6.Ս. Մկրտչյան | | |
| 7.Ա. Մինասյան | | |
| 8.Հ.Կարապետյան | | |
| 9.Ա. Ծառուկյան | | |
| 10.Ն. Մարգարյան | | |
| 11.Գ. Սարգսյան | | |
| 12.Ա. Վարդանյան | | |
| 13.Ն. Գրիգորյան | | |
| 14.Վ. Եղիազարյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

Հավելված
Թալին համայնքի ավագանու
2024թ-ի մարտի 29-ի թիվ 22-Ա որոշման

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) | Հաստիքների քանակը | ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ | Աշխատավարձի գումարը ընդամենը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | | |
| 8 | Վարչական ղեկավար (Արագածավան) | 1 | 360.000 | 1 | | 360.000 |
| 9 | Վարչական ղեկավար (Արտենի) | 1 | 316.000 | 1 | | 316.000 |
| 10 | Վարչական ղեկավար (Մաստարա, Ձորագյուղ) | 1 | 305.000 | 1 | | 305.000 |
| 11 | Վարչական ղեկավար (Աշնակ, Ն.Բազմաբերդ, Կաթնաղբյուր) | 3 | 294.000 | 3 | | 882.000 |
| 12 | Վարչական ղեկավար (Ազատավան, Կաքավաձոր, Ն.Սասնաշեն) | 3 | 283.000 | 3 | | 849.000 |
| 13 | Վարչական ղեկավար (Ակունք, Դավթաշեն, Թաթուլ, Իրինդ) | 4 | 272.000 | 4 | | 816.000 |
| 14 | Վարչական ղեկավար (Դաշտադեմ, Զարինջա, Զովասար,Կարմրաշեն Նոր Արթիկ,Շղարշիկ) | 6 | 261.000 | 6 | | 1.566.000 |
| 15 | Վարչական ղեկավար (Գառնահովիտ, Եղնիկ, Հացաշեն, Սուսեր,Ոսկեթաս, Պարտիզակ, Վ.Բազմաբերդ, Վ.Սասնաշեն, Ցամաքասար) | 9 | 250.000 | 9 | | 2.250.000 |
| 16 | Վարչական ղեկավար (Լուսակն, Գետափ) | 2 | 239.000 | 2 | | 478.000 |
| 17 | Վարչական ղեկավար (Դիան, Ծաղկասար, ) | 2 | 228.000 | 2 | | 456.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

<<29>> մարտի 2024 թվական N 23-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2023Թ-Ի <<ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 158-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԵՎ 10-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

*Թալին համայնքի ավագանին որոշում է՝*

1.Թալին համայնքի ավագանու 27.12.2023թ-ի՝ <<ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ՀՈԱԿ-ների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 158-Ա որոշման թիվ 1 հավելվածի 10-րդ տողում ավելացնել՝ երկու ջրբաժանի հաստիք ամսեկան 135,0 հազ. դրամ պաշտոնային դրույքաչափով, 14-րդ տողում ավելացնել՝ չորս հավաքարարի հաստիք ամսեկան 150,0 հազ. դրամ պաշտոնային դրույքաչափով և 19-րդ տողում ավելացնել՝ հատուկ բանվորի չորս հաստիք ամսեկան 165,0 հազ. դրամ պաշտոնային դրույքաչափով:
2.10-րդ հավելվածի 7-րդ տողում ավելացնել՝ մեկ խոհարարի օգնականի հաստիք ամսեկան 105,0 հազ. դրամ պաշտոնային դրույքաչափով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024թ-ի ապրիլի 1-ից:

| Կողմ-15 | Դեմ-2 | Ձեռնպահ-2 |
|---|---|---|
| 1.Տ. Սափեյան | 1.Ս. Մուրադյան | 1.Վ.Եղիազարյան |
| 2.Բ. Պողոսյան | 2.Ղ. Հակոբյան | 2 .Կ. Գրիգորյան |
| 3.Ա. Կարապետյան | | |
| 4.Ս. Գրիգորյան | | |

5.Գ. Ղազարյան
6.Ս. Մկրտչյան
7.Ա. Մինասյան
8.Հ.Կարապետյան
9.Ա. Ծառուկյան
10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Դ. Մանուկյան
15.Գ. Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 24-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 56-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

***<u>Թալին համայնքի ավագանին որոշում է՝</u>***

1.Տալ համաձայնություն «Թալին համայնքի Արագածավան բնակավայրում Ֆոտովոլտային կայանների տեղադրում» ծրագրի շրջանակում, Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին, Արագածավան բնակավայրում 02-016-0002-0018 ծածկագրով 0.25 հա և 02-016-0233-0639 ծածկագրով 0.26 հա մակերեսներով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում արևային ֆոտովոլտային կայաններ կառուցելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

| Կողմ-15 | Դեմ-0 | Ձեռնպահ-4 |
|---|---|---|
| 1.Տ. Սափեյան | | 1.Ս. Մուրադյան |
| 2.Բ. Պողոսյան | | 2 .Ղ. Հակոբյան |
| 3.Ա. Կարապետյան | | 3.Դ. Մանուկյան |
| 4.Ս. Գրիգորյան | | 4. Գ. Ավետիսյան |
| 5.Գ. Ղազարյան | | |
| 6.Ս. Մկրտչյան | | |
| 7.Ա. Մինասյան | | |
| 8.Հ.Կարապետյան | | |
| 9.Ա. Ծառուկյան | | |
| 10.Ն. Մարգարյան | | |
| 11.Գ. Սարգսյան | | |

12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Վ. Եղիազարյան
15.Կ. Գրիգորյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

<<29>> մարտի 2024 թվական N 25-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N-286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգ»-ի 44-րդ կետի «Ը» - ենթակետով, հիմք ընդունելով 07.04.2022թ-ի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության N ՇԱԹ-29/674 «Օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թույլտվություն»-ը, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության N L-674 Լեռնահատկացման ակտը, «ԱՎ ՍԹՈՆԵ» ՍՊ ընկերության տնօրենի 26.02.2024թ-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը,

***Թալին համայնքի ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի Կաթնաղբյուր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-057-0108-0910 կադաստրային ծածկագրով՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, ընդերքօգտագործման գործառնական նշանակության 11,09785 հա հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու «ԱՎ ՍԹՈՆԵ» ՍՊԸ-ին:

2.«ԱՎ ՍԹՈՆԵ» ՍՊԸ-ի հետ կնքել վարձակալության պայմանագիր մինչև 07.04.2042 թվականը և փաստացի օգտագործվող հողամասի մեկ հեկտարի համար սահմանել տարեկան 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ վարձավճար, իսկ չօգտագործվող հողամասի մեկ հեկտարի համար սահմանել տարեկան 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ-15**

1.Տ. Սափեյան
2.Բ. Պողոսյան
3.Ա. Կարապետյան
4.Ս. Գրիգորյան
5.Գ. Ղազարյան
6.Ս. Մկրտչյան
7.Ա. Մինասյան
8.Հ.Կարապետյան
9.Ա. Ծառուկյան
10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Վ. Եղիազարյան
15.Ս. Մուրադյան

**Դեմ-1**

1.Ղ. Հակոբյան

**Ձեռնպահ-3**

1.Կ. Գրիգորյան
2.Դ. Մանուկյան
3.Գ. Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 26-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի առաջին և 2-րդ մասերի, 74-րդ, 76-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 12.04.2001թ. 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգ»-ի 46-րդ կետի պահանջներով, Թալին համայնքի գլխավոր հատակագծին, քաղաքաշինական գոտիավորման նախագծին և հողերի օգտագործման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

***Թալին համայնքի ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-14 | Դեմ-1 | Ձեռնպահ-4 |
|---|---|---|
| 1.Տ. Սափեյան | 1.Ղ. Հակոբյան | 1.Վ.Եղիազարյան |
| 2.Բ. Պողոսյան | | 2.Կ. Գրիգորյան |
| 3.Ա. Կարապետյան | | 3.Դ. Մանուկյան |
| 4.Ս. Գրիգորյան | | 4. Գ. Ավետիսյան |
| 5.Գ. Ղազարյան | | |
| 6.Ս. Մկրտչյան | | |
| 7.Ա. Մինասյան | | |
| 8.Հ.Կարապետյան | | |
| 9.Ա. Ծառուկյան | | |

10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Ս. Մուրադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

Հավելված
Թալին համայնքի ավագանու
2024թ-ի մարտի 29-ի թիվ N 26-Ա որոշման

| Լ,ոտ | Հողամասի գործառնական նշանակությունը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /հա / | Նպատակային նշանակությունը | Շինության առկայությունը և գինը | Մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Վարձակալության պայմանագրի ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արոտավայր | Արտենի բնակավայր | 02-021-0229-0035 | 0,7949 | գյուղատնտեսական | չկա | 9550 | 3 տարի |
| 2 | Վարելահող Արոտավայր | Արտենի բնակավայր | 02-021-0229-0036 | 0,7556<br>3,967<br>Ընդ, 4,7226 | գյուղատնտեսական | չկա | 61,400 | 3 տարի |
| 3 | Վարելահող | Արտենի բնակավայր | 02-021-0229-0010 | 0,5809 | գյուղատնտեսական | չկա | 8,750 | 3 տարի |
| 4 | Վարելահող | Արտենի բնակավայր | 02-021-0229-0007 | 1.307 | գյուղատնտեսական | չկա | 19,650 | 3 տարի |
| 5 | Վարելահող | Արտենի բնակավայր | 02-021-0229-0006 | 1,0485 | գյուղատնտեսական | չկա | 15,750 | 3 տարի |
| 6 | Վարելահող | Արագածավան բնակավայր | 02-016-0499-0910 | 19,0798 | գյուղատնտեսական | չկա | 477,000 | 3 տարի |
| 7 | Արոտավայր | Վ, Սասնաշեն բնակավայր | 02-104-0121-0027 | 0,7622 | գյուղատնտեսական | չկա | 9,150 | 25 տարի |
| 8 | Արոտավայր | Կաքավաձոր բնակավայր | 02-060-0202-0367 | 7,7 | գյուղատնտեսական | չկա | 92,400 | 25 տարի |
| 9 | Այլ հողատեսք | Կաքավաձոր բնակավայր | 02-060-0204-0228 | 0,34017 | գյուղատնտեսական | չկա | 4,100 | 25 տարի |
| 10 | Այլ հողատեսք | Կաքավաձոր բնակավայր | 02-060-0204-0229 | 1,65983 | գյուղատնտեսական | չկա | 19,950 | 25 տարի |
| 11 | Ընդհանուր օգտագործման | Ն. Բազմաբերդ բնակավայր | 02-073-0530-0002 | 0,00184 | բնակավայրերի | չկա | 10,000 | 25 տարի |
| 12 | Այլ հողատեսք | Կաքավաձոր բնակավայր | 02-060-0204-0237 | 1,29854 | գյուղատնտեսական | չկա | 15,600 | 25 տարի |
| 13 | Այլ հողատեսք | Կաքավաձոր բնակավայր | 02-060-0588-0012 | 3,457595 | գյուղատնտեսական | չկա | 41,500 | 25 տարի |
| 14 | Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների | Արագածավան բնակավայր | 02-016-0233-0644 | 2,9812 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | չկա | 160,000 | 25 տարի |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 05030561

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 27-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 02-016-0489-0005, 02-016-0489-0008, 02-016-0489-0017, 02-016-0489-0012, 02-016-0489-0003, 02-016-0489-0058, 02-016-0489-0016 ԵՎ 02-016-0489-0061 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չեն գտնվում ինժեներատեխնիկական, տրանսպորտային և այլ կոմունիկացիոն օբյեկտների օտարման գոտիներում, չեն խախտում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև վերոնշյալ հողակտորները քաղաքացի Արմեն Շվայցերի Այվազյանից բացի այլ անձի օտարումը կառաջացնի հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Շվայցերի Այվազյանի 06.02.2024 թվականի հողամասը ուղղակի վաճառքով իրեն օտարելու վերաբերյալ թիվ 056/895, թիվ 056/892, թիվ 056/899, թիվ 056/896, թիվ 056/893, թիվ 056/894, թիվ 056/901 և թիվ 056/898 դիմումները.

***Թալին համայնքի ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի, Արագածավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող՝ 02-016-0489-0005 կադաստրային ծածկագրով 0,18636 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասը՝ 68022 ՀՀ դրամով, 02-016-0489-0008 կադաստրային ծածկագրով 0,3019 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասը՝ 110194 ՀՀ դրամով, 02-016-0489-0017 կադաստրային ծածկագրով 0,1778 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասը՝ 64897 ՀՀ դրամով, 02-016-0489-0012 կադաստրային ծածկագրով 0,36848 հա մակերեսով

գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասը՝ 134495 ՀՀ դրամով, 02-016-0489-0003 կադաստրային ծածկագրով 0,45772 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասը՝ 161068 ՀՀ դրամով, 02-016-0489-0058 կադաստրային ծածկագրով 0,20281 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք հողամասը՝ 13690 ՀՀ դրամով, 02-016-0489-0016 կադաստրային ծածկագրով 1,79038 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասը՝ 653489 ՀՀ դրամով և 02-016-0489-0061 կադաստրային ծածկագրով 0,74053 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասը՝ 270294 ՀՀ դրամով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Արմեն Շվայցերի Այվազյանին:

2.Համայնքի ղեկավարին՝ Արմեն Շվայցերի Այվազյանի հետ կնքել հողամասերի առուվաճառքի պայմանագրեր և համայնքի հողային բալանսում կատարել համապատասխան փոփոխություններ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-14 | Դեմ-1 | Ձեռնպահ-4 |
|---|---|---|
| 1.Տ. Սափեյան | 1.Ղ. Հակոբյան | 1.Վ.Եղիազարյան |
| 2.Բ. Պողոսյան | | 2.Կ. Գրիգորյան |
| 3.Ա. Կարապետյան | | 3.Դ. Մանուկյան |
| 4.Ս. Գրիգորյան | | 4. Գ. Ավետիսյան |
| 5.Գ. Ղազարյան | | |
| 6.Ս. Մկրտչյան | | |
| 7.Ա. Մինասյան | | |
| 8.Հ.Կարապետյան | | |
| 9.Ա. Ծառուկյան | | |
| 10.Ն. Մարգարյան | | |
| 11.Գ. Սարգսյան | | |
| 12.Ա. Վարդանյան | | |
| 13.Ն. Գրիգորյան | | |
| 14.Ս. Մուրադյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 28-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***Թալին համայնքի ավագանին որոշում է՝***

1.Թալին համայնքի Լուսակն բնակավայրի 1-ին փողոցից սկսվող, 02-052-0009-0014 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացվող 0,141 հա հատվածը անվանակոչել Թալին համայնք Լուսակն բնակավայր 1-ին փողոց 1-ին փակուղի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Տ. Սափեյան
2.Բ. Պողոսյան
3.Ա. Կարապետյան
4.Ս. Գրիգորյան
5.Գ. Ղազարյան
6.Ս. Մկրտչյան
7.Ա. Մինասյան
8.Հ.Կարապետյան
9.Ա. Ծառուկյան
10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Վ.Եղիազարյան
15.Կ. Գրիգորյան

16.Ս. Մուրադյան
17.Ղ. Հակոբյան
18.Դ. Մանուկյան
19.Գ. Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 29-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ, Ն.ԲԱԶՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 02-073-0242-0013 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 3,8367 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 29-րդ և 31-րդ կետերով, հիմք ընդունելով Հ/Զ Լևանտինա Ինխեներիա կոնստրուցիոն և Օբրաս Պուբլիկաս Ռեգադիոս (LIC-OPR) կազմակերպության կողմից 11/03/2024թ-ին ստացած N S-2024-058 գրությունը և այդ գրությանը կից հավելված 1-ում ներկայացված տեղեկատվությունը.

*__Թալին համայնքի ավագանին որոշում է՝__*

1.Ծրագրի իրականացման ընթացքում առաջացած ժայռային հանույթ կուտակելու և շարժական ջարդիչ կայաններ տեղակայելու նպատակով Լևանտինա Ինխեներիա կոնստրուցիոն և Օբրաս Պուբլիկաս Ռեգադիոս (LIC-OPR) կազմակերպությանը տրամադրել վերոնշյալ կադաստրային ծածկագրերով հողատարածքների օգտագործման ժամանակավոր թույլտվություն:

2.Թույլատրել Լևանտինա Ինխեներիա կոնստրուցիոն և Օբրաս Պուբլիկաս Ռեգադիոս (LIC-OPR) կազմակերպությանը ժամանակավորապես օգտագործել վերոնշյալ հողատարածքը մինչև «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ՝ ՏՐԱՆՇ 2, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ԲԱՎՐԱ (ՍԿՍԱԾ ԿՄ 37+545-ԻՑ ՄԻՆՉԵՎ ԿՄ 71+435) ՄՈՏ 34.0 ԿՄ Մ1 ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՄԱՆ» ծրագրի իրականացման ավարտը, բայց ոչ ավել քան 2 տարի ժամկետով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Տ. Սափեյան
2.Բ. Պողոսյան
3.Ա. Կարապետյան
4.Ս. Գրիգորյան
5.Գ. Ղազարյան
6.Ս. Մկրտչյան
7.Ա. Մինասյան
8.Հ.Կարապետյան
9.Ա. Ծառուկյան
10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Վ.Եղիազարյան
15.Կ. Գրիգորյան
16.Ս. Մուրադյան
17.Ղ. Հակոբյան
18.Դ. Մանուկյան
19.Գ. Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 30-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և 67-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N-286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգ»-ի 5-րդ գլխի և հիշյալ որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով, Թալին համայնքի գլխավոր հատակագծին քաղաքաշինական գոտիավորման նախագծին և հողերի օգտագործման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

*__Թալին համայնքի ավագանին որոշում է՝__*

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-15 | Դեմ-0 | Ձեռնպահ-4 |
|---|---|---|
| 1.Տ. Սափեյան | | 1.Վ.Եղիազարյան |
| 2.Բ. Պողոսյան | | 2.Կ. Գրիգորյան |
| 3.Ա. Կարապետյան | | 3.Դ. Մանուկյան |
| 4.Ս. Գրիգորյան | | 4.Գ. Ավետիսյան |
| 5.Գ. Ղազարյան | | |
| 6.Ս. Մկրտչյան | | |
| 7.Ա. Մինասյան | | |

8.Հ.Կարապետյան
9.Ա. Ծառուկյան
10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Ս. Մուրադյան
15.Ղ. Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՖԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

Հավելված
Թալին համայնքի ավագանու
2024թ-ի մարտի 29-ի թիվ 30-Ա որոշման

| Լոտ | Հողամասի գործառնական նշանակությունը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /հա / | Նպատակային նշանակությունը | Շինության առկայությունը և գինը ՀՀ դրամ | 1քմ-ի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բնակելի կառուցապատման | գ.Մաստարա 3-րդ փողոց 8-րդ փակուղի 1 | 02-069-0003-0012 | 0.0688 | բնակավայրերի | չկա | 260.00 |
| 2 | Բնակելի կառուցապատման | ք. Թալին Ա. Խանջյան փողոց 28/1 հողամաս | 02-003-0021-0316 | 0.002942 | բնակավայրերի | չկա | 1465.00 |
| 3 | Բնակելի կառուցապատման | ք. Թալին Ա. Խանջյան փողոց 28/2 հողամաս | 02-003-0021-0314 | 0.002973 | բնակավայրերի | չկա | 1465.00 |
| 4 | Բնակելի կառուցապատման | ք. Թալին Ա. Խանջյան փողոց 28/3 հողամաս | 02-003-0021-0315 | 0.005127 | բնակավայրերի | չկա | 1465.00 |
| 5 | Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների | գ. Ցամաքասար 2-րդ փողոց 7/2 հողամաս | 02-107-0012-0033 | 0.004302 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | չկա | 111.00 |
| 6 | Բնակելի կառուցապատման | գ. Արագածավան Հոկտեմբերյան խճուղի 2-րդ նրբանցք 54/60 հողամաս | 02-016-0034-0672 | 0.0027 | բնակավայրերի | չկա | 620.00 |
| 7 | Հասարակական կառուցապատման | ք. Թալին Մ. Քոթանյան փողոց 12/1 հողամաս | 02-003-0056-0827 | 0.02357 | բնակավայրերի | չկա | 1465.00 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 31-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.5-րդ, 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած <<Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու և գնահատման արդյունքում տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր կազմելու մեթոդաբանություն և գործողությունների ծրագիր>> ձեռնարկը և համայնքի ղեկավարի առաջարկությունը,

***<u>Թալին համայնքի ավագանին որոշում է՝</u>***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքապետարանի աշխատակազմի հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-18 | Դեմ-0 | Ձեռնպահ-1 |
|---|---|---|
| 1.Տ. Սափեյան | | 1.Վ. Եղիազարյան |
| 2.Բ. Պողոսյան | | |
| 3.Ա. Կարապետյան | | |
| 4.Ս. Գրիգորյան | | |
| 5.Գ. Ղազարյան | | |
| 6.Ս. Մկրտչյան | | |

7.Ա. Մինասյան
8.Հ.Կարապետյան
9.Ա. Ծառուկյան
10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Կ. Գրիգորյան
15.Ս. Մուրադյան
16.Ղ. Հակոբյան
17.Դ. Մանուկյան
18.Գ. Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

*Հավելված*
*Թալին համայնքի ավագանու*
*2024 թվականի մարտի 31-Ա որոշման*

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքապետարանի աշխատակազմի հակակոռուպցիոն միջոցառումների

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում (այսուհետ՝ ՏԻՄ-եր) և համայնքապետարանի աշխատակազմում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված ,,Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու և գնահատման արդյունքում տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր կազմելու մեթոդաբանություն և գործողությունների ծրագիր,, մեթոդական ձեռնարկի հիման վրա:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին համայնքի ՏԻՄ-երում և համայնքապետարանի աշխատակազմում տեղական հակակոռուպցիոն քաղաքականության պատշաճ իրագործման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի №1332-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 7-րդ միջոցառման կիրառման ապահովումը:

Փաստաթղթում ներկայացվում է նաև ՏԻՄ-երում և աշխատակազմերում կոռուպցիոն ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանությունից բխող գործողությունների ծրագիրը, որի հիմնական նպատակն է սահմանել ՏԻՄ-երի այն հիմնական քայլերն ու գործողությունները, որոնց իրականացման արդյունքում կնվազեցվեն ՏԻՄ-երում և աշխատակազմերում իրավակիրառական պրակտիկային բնորոշ կոռուպցիոն հնարավոր ռիսկերը:

Համայնքում կոռուպցիոն հնարավոր ռիսկերի համապարփակ գնահատումներ իրականացնելու պարտավորությունը համաձայն ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման վերապահվում է տարածքային կառավարման բնագավառի պետական լիազոր մարմնին:

Ծրագրի արդյունավետ աշխատանքը ապահովելու առաջին քայլը տեղական ինքնակառավարման համակարգի այն հիմնական խնդիրների վերհանումն է, որոնք անմիջական աղերս ունեն ՏԻՄ-երում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի առաջացման հետ:

ՏԻՄ-երում կոռուպցիոն ռիսկերի առաջացման հնարավոր պատճառներ են.

- ✓ Տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության ցածր մակարդակը.
- ✓ Բնակչության իրազեկվածության պակասը համայնքի ՏԻՄ-երի լիազորությունների վերաբերյալ.
- ✓ Համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների մատուցման պատշաճ կազմակերպման հետ կապված խնդիրները.

- ✓ Համայնքապետարանի աշխատակազմում «Մեկ պատուհան» սկզբունքով ծառայությունների տրամադրման բացակայությունը.
- ✓ Համայնքներում համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ստացման օնլայն հարթակների բացակայությունը և այլն.
- ✓ Օրենսդրական խնդիրներ.

Տեղական ինքնակառավարման գործընթացներում կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացառման տեսանկյունից <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի հետևյալ հիմնական սկզբունքները.

1. ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականությունը,
2. Հրապարակայնությունը,
3. Թափանցիկությունը,
4. Համայնքի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,
5. ՏԻՄ-երի սեփական պատասխանատվությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի սկզբունքների կատարումն ապահովելու և տեղական ինքնակառավարման գործընթացներում կոռուպցիոն հնարավոր ռիսկերի վերահսկողության և բացառման նպատակով անհրաժեշտ է ստեղծել Թալին համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատման աշխատանքային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

Աշխատանքային հանձնաժողովի կազմում ընդգրկել՝

1) Համայնքի ավագանու անդամ կամ անդամներ.
2) Համայնքի ղեկավար.
3) Համայնքային աշխատակազմի քար
4) տուղար.
5) Համայնքապետարանի աշխատակազմի իրավաբան պատասխանատու.
6) Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական պատասխանատու.
7) Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ.
8) Տեղական ինքնակառավարման ոլորտի փորձագետ.
9) Այլ անդամներ՝ ավագանու որոշմամբ.
10) Ինքնագնահատման խմբի աշխատանքները համակարգող անձ՝ համայնքի ղեկավարի որոշմամբ:

Տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատման աշխատանքային հանձնաժողովի ուսումնասիրման և վերահսկման ենթակա ցուցանիշներն են.

1. *«Առաջնորդություն և կառավարում»*.

| | |
|---|---|
| Ցուցանիշ 1.1 | *Համայնքի ավագանու գործունեություն.* |
| Ցուցանիշ 1.2 | *Համայնքի ղեկավարի գործունեություն.* |
| Ցուցանիշ 1.3 | *Համայնքի աշխատակազմի քարտուղարի գործունեություն.* |
| Ցուցանիշ 1.4 | *Համայնքի աշխատակազմի գործունեություն.* |

Ցուցանիշ 1.5 *Համայնքի ռազմավարական պլանավորում և տնտեսական զարգացում.*

Ցուցանիշ 1.6

Ցուցանիշ 1.7

*2. «Ֆինանսական կառավարում».*

Ցուցանիշ 2.1 *Բյուջետային գործընթաց և հաշվետվողականություն.*

Ցուցանիշ 2.2 *Տեղական հարկային վարչարարություն և ֆինանսական անկախություն.*

Ցուցանիշ 2.3 *Գնումներ և պայմանագրերի կատարում.*

Ցուցանիշ 2.4 *Եկամուտների հավաքագրում և ծախսերի կատարում.*

Ցուցանիշ 2.5 *Համայնքի գույքի կառավարում.*

Ցուցանիշ 2.6

*3. «Լիազորություններ, հանրային և տեղական ծառայություններ».*

Ցուցանիշ 3.1 *Հանրային և տեղական ծառայությունների մատուցման վարչարարություն (ՏԻՄ լիազորություններ և պետական մարմինների ապակենտրոնացված լիազորություններ).*

Ցուցանիշ 3.2 *Հանրային և տեղական ծառայությունների մատուցման պլանավորում և իրագործում.*

Ցուցանիշ 3.3 *Հանրային և տեղական ծառայությունների համար թույլտվությունների կամ այլ փաստաթղթերի տրամադրում և ծառայությունների դիմաց վճարման ընթացակարգեր.*

Ցուցանիշ 3.4 *Հանրային և տեղական ծառայությունների հասանելիություն և բավարարվածություն.*

Ցուցանիշ 3.5 *Հանրային և տեղական ծառայությունների որակ, որակի նկատմամբ հսկողություն, որակի գնահատում (մոնիթորինգ).*

Ցուցանիշ 3.6

*4. «Հանրային մասնակցություն».*

Ցուցանիշ 4.1 *Հանրային մասնակցությանը վերաբերող օրենսդրության պահպանում.*

Ցուցանիշ 4.2 *Հանրային մասնակցություն որոշումների կայացմանը և հանրային վերահսկողություն.*

Ցուցանիշ 4.3 *ՏԻՄ-երի և համայնքային աշխատակազմի աշխատանքի թափանցիկություն/հաշվետվողականություն.*

Ցուցանիշ 4.4 *Կանանց/երիտասարդների/խոցելի խմբերի ներգրավում (ներառականություն).*

Ցուցանիշ 4.5 *Հանրության հետ հաղորդակցության ապահովում և հանրության իրազեկում.*

ՑՈՒՑԱՆԻՇ 4.6

Հանձնաժողովը գնահատում է նաև տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում գոյություն ունեցող ներքին հսկողական համակարգերը (ավագանու որոշումներ, համայնքի ղեկավարի հրամաններ, կառուցակարգեր, կանոնակարգեր, կարգեր, ուղեցույցեր և այլն):

Հանձնաժողովը առաջին հերթին գնահատում է համայնքային աշխատակազմի ֆինանսական կառավարման հսկողական համակարգերը, որոնք գործող օրենսդրությամբ և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունն է, որով ողջամիտ ձևով երաշխավորվում է համապատասխան համայնքային աշխատակազմի գործառույթների իրականացումը:

Հանձնաժողովի կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1). տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող հսկողություն, որն իրենից ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմինների գործողություններ՝ ուղղված համայնքային աշխատակազմի կոռուպցիոն ռիսկերի կանխմանը կամ նվազեցմանը:

2). կոռուպցիոն ռիսկերի գնահատման անկախություն՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործառույթի՝ համայնքային աշխատակազմի այլ գործառույթներից առանձնացված իրականացում.

3). կոռուպցիոն ռիսկերի գնահատման օբյեկտիվություն՝ հանձնախմբի կողմից կոռուպցիոն ռիսկերի գնահատման ընթացքում տեղեկությունների հավաքագրման, գնահատման և փոխանակման գործընթացում՝ մասնագիտական անվերապահ անշահախնդրության ցուցաբերում.

4). հանձնախմբի անդամների ազնվություն՝ հանձնախմբի անդամների կողմից՝ կոռուպցիոն ռիսկերի առաջացման բոլոր հանգամանքների հավասարակշռված և համարժեք գնահատում, չենթարկվելով սեփական հետաքրքրությունների կամ այլ անձանց դատողությունների անհարկի ազդեցությանը.

5). կոռուպցիոն ռիսկերի գնահատման կարողունակություն՝ հանձնախմբի կողմից համապատասխան գիտելիքների, հմտությունների, փորձառության և գնահատման գործողությունները կատարելու համար՝ անհրաժեշտ կարողությունների տիրապետում և կիրառում.

6). կոռուպցիոն ռիսկերի գնահատման անկողմնակալություն՝ հանձնախմբի կողմից կոռուպցիոն ռիսկերի գնահատման աշխատանքի ազնիվ և պատասխանատու իրականացում.

7). կոռուպցիոն ռիսկերի գնահատման գաղտնիություն՝ հանձնախմբի աշխատանքի ընթացքում ստացած տեղեկությունների հուսալի պահպանում, մասնավորապես՝ հանձնախմբի անդամները պարտավոր են առանց համապատասխան լիազորության՝ չհրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

8). հանձնախմբի անդամների վարքագծի կանոններ՝ համայնքային ծառայողների վարքագրքի հիման վրա հաստատված հանձնախմբի անդամների վարքագծի կանոններ, որոնք տարածվում են ինչպես հանձնախմբի անդամ՝ տեղական իքնակառավարման մարմինների և համայնքային աշխատակազմի ներկայացուցիչների, այնպես էլ հրավիրյալ անձանց վրա.

9). կոռուպցիոն ռիսկերի գնահատման կանոնակարգ՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ ավագանու հետ համաձայնեցված փաստաթուղթ, որով սահմանվում են կոռուպցիոն ռիսկերի գնահատման նպատակը, հանձնախմբի լիազորությունները և պարտականությունները, կոռուպցիոն ռիսկերի գնահատման շրջանակը, հանձնախմբի կողմից կոռուպցիոն ռիսկերի գնահատման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի, աշխատանքային պայմանների և գույքի հետ կապված հարցերը2

10). կոռուպցիոն ռիսկերի գնահատման առաջադրանք՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման կանոնակարգի հիման վրա կոնկրետ կոռուպցիոն ռիսկի գնահատման առաջադրանքի կամ ուսումնասիրության իրականացում:

Հանձնաժողովը տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքում ստացված կոռուպցիոն վարկանիշի բարելավման գործողությունների ծրագիրը իրականացնում է՝

1. Տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքում ստացված կոռուպցիոն վարկանիշի բարելավման գծով գործողությունների ծրագրի սահմանման համար հիմք է ընդունվում յուրաքանչյուր ցուցանիշի և հետևաբար կատեգորիայի գծով ստացված միավորները:

2. Տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքում ստացված կոռուպցիոն վարկանիշի բարելավման գծով գործողությունների ծրագրում՝ յուրաքանչյուր ցուցանիշի համար հանձնախմբի կողմից սահմանվում են միջոցառումներ:

3. Յուրաքանչյուր ցուցանիշի համար կարող է սահմանվել մեկ կամ մի քանի միջոցառում, իսկ յուրաքանչյուր միջոցառման իրագործման համար վերջնաժամկետ, միջոցառումների իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու:

Հանձնաժողովի աշխատանքի հիմքերից է համայնքում տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ ազդարարման ներքին համակարգի ստեղծումը անխափան աշխատանքի ապահովումը:

1. Տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի ազդարարման համակարգն իրենից ներկայացնում է՝ կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի տեղեկատվության գաղտնի ստացման, տեղեկատվության պահպանման, վերլուծության և վերլուծության հիման վրա որոշումների կայացման համակարգ:

2. Տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի ազդարարման համակարգում ստացված ցանկացած ազդակ՝ առանց բացառության, պետք է քննարկվի հանձնախմբի կողմից՝ որոշելու այդ տեղեկատվության հետագա կիրառումը: Այն դեպքերը, որոնք կարող են պարունակել քրեորեն պատժելի արարքներ կամ վարքագիծ կամ գործողություններ՝

անվերապահորեն պետք է պաշտոնապես տրամադրվեն համապատասխան իրավապահ մարմիններին:

3. Հանձնախմբի ստեղծումը. հանձնախմբի կազմը և կառուցվածքը, կանոնադրությունը և գործունեության կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սահմանում է ավագանին, իսկ հանձնախումբը ապահովում է տեղական ինքնակառավարման մարմիններում և համայնքի աշխատակազմում կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի վերաբերյալ տեղեկատվության գաղտնի ստացման, տեղեկատվության պահպանման, վերլուծության և վերլուծության հիման վրա որոշումների կայացման գործընթացները:

4. Կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների և դեպքերի տեղեկատվության գաղտնի ստացման նպատակով՝ տեղական ինքնակառավարման մարմինները սահմանում են տեղեկությունների ստացման գործիքակազմը, մասնավորաբար՝ վեբ-կայքում համապատասխան հարթակ և (կամ) էլեկտրոնային փաստի հասցե և (կամ) թեժ գիծ:

5. Տեղական ինքնակառավարման մարմինները երաշխավորում են կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները և դեպքերը ազդարարողների գաղտնիությունը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 32-Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ, Ն.ԲԱԶՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 02-073-0219-0022, 02-073-0216-0010 ԵՎ 02-073-0216-0018 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ՀԱՆՈՒՅԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ Կառավարության 10.05.2019թ. N 572-Ն «Հողագրունտի հանույթի կարգը հաստատելու» մասին որոշման դրույթներով, հիմք ընդունելով «Կապավոր» ՍՊԸ կազմակերպության կողմից 21/03/2024թ-ին ստացած N 041-Ն գրությունը.

***Թալին համայնքի ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն «Կապավոր» ՍՊԸ կազմակերպության կողմից 02-073-0219-0022, 02-073-0216-0010 և 02-073-0216-0018 ծածկագրերով հողամասերում հողագրունտի հանույթի աշխատանքներ իրականացնելուն՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ՝ ՏՐԱՆՇ 2, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ԲԱՎՐԱ (ՍԿՍԱԾ ԿՄ 37+545-ԻՑ ՄԻՆՉԵՎ ԿՄ 71+435) ՄՈՏ 34.0 ԿՄ Մ1 ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՄԱՆ Ծրագրի իրականացման շրջանակներում:

2.Թույլատրել «Կապավոր» ՍՊԸ կազմակերպությանը իրականացնել հողագրունտի հանույթի աշխատանքներ վերոնշյալ կադաստրային կոդերով հողամասերում մինչև «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ՝ ՏՐԱՆՇ 2, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ԲԱՎՐԱ (ՍԿՍԱԾ ԿՄ 37+545-ԻՑ ՄԻՆՉԵՎ ԿՄ 71+435) ՄՈՏ 34.0 ԿՄ Մ1 ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՄԱՆ Ծրագրի իրականացման ավարտը, բայց ոչ ավել քան մեկ ու կես տարի ժամկետով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-19 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|

1.Տ. Սափեյան
2.Բ. Պողոսյան
3.Ա. Կարապետյան
4.Ս. Գրիգորյան
5.Գ. Ղազարյան
6.Ս. Մկրտչյան
7.Ա. Մինասյան
8.Հ.Կարապետյան
9.Ա. Ծառուկյան
10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Կ. Գրիգորյան
15.Ս. Մուրադյան
16.Ղ. Հակոբյան
17.Դ. Մանուկյան
18.Գ. Ավետիսյան
19.Վ.Եղիազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 33-Ա

## ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի առաջին և 2-րդ մասերի, 76-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 14.01.2010թ. 16-Ն որոշմամբ հաստատված հավելվածի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգ»-ի երրորդ գլխի 9-րդ կետի պահանջներով, Թալին համայնքի գլխավոր հատակագծին, քաղաքաշինական գոտիավորման նախագծին և հողերի օգտագործման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

***Թալին համայնքի ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող 02-016-0528-0032 կադաստրային ծածկագրով, 1,0558 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով վարձակալության տրամադրելու և որպես մեկարկային գին մեկ հեկտարի համար տարեկան սահմանել 12.000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-15 | Դեմ-1 | Ձեռնպահ-3 |
|---|---|---|
| 1.Տ. Սափեյան | 1.Ղ. Հակոբյան | 1.Կ. Գրիգորյան |
| 2.Բ. Պողոսյան | | 2.Դ. Մանուկյան |
| 3.Ա. Կարապետյան | | 3. Գ. Ավետիսյան |

4.Ս. Գրիգորյան
5.Գ. Ղազարյան
6.Ս. Մկրտչյան
7.Ա. Մինասյան
8.Հ.Կարապետյան
9.Ա. Ծառուկյան
10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Ս. Մուրադյան
15.Վ.Եղիազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<29>> մարտի 2024 թվական N 34-Ա

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով,

***Թալին համայնքի ավագանին որոշում է՝***

1.Թալին համայնքի ավագանու 2024 թվականի առաջին նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը սահմանել 2024թ-ի ապրիլի 30-ին, ժամը 11:00-ին:

2.Նիստը կազմակերպել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի <<Թալինի մանկական գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի դահլիճում, հասցեն՝ ք Թալին, Շահումյան փողոց 15:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Տ. Սափեյան
2.Բ. Պողոսյան
3.Ա. Կարապետյան
4.Ս. Գրիգորյան
5.Գ. Ղազարյան
6.Ս. Մկրտչյան
7.Ա. Մինասյան
8.Հ.Կարապետյան
9.Ա. Ծառուկյան
10.Ն. Մարգարյան
11.Գ. Սարգսյան
12.Ա. Վարդանյան
13.Ն. Գրիգորյան
14.Կ. Գրիգորյան
15.Ս. Մուրադյան
16.Ղ. Հակոբյան

17.Դ. Մանուկյան

18.Գ. Ավետիսյան

19.Վ.Եղիազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
29 մարտի 2024թ.